«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 3 - 2

19 նոյեմբերի 2020 թվականի (առցանց նիստի)

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 1 արձանագրությամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգում» լրացում կատարելու մասին

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 1-ին ենթակետը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 1 արձանագրությամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգի» 8-րդ կետը «Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով» նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Գիտական խորհրդի նիստերը կարող են կազմակերպվել նաև հարցման կարգով և առցանց (տեսակոնֆերանսի) եղանակով»:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Արմեն Գրիգորյան**

2020 թ. նոյեմբերի 19
Երևան